

բամերժ բաներ են, որ, ի հարկէ, կարելի չպիտի լինէր հաշտեցնել անհաշտելին։ Եւ Խորէնը զոհ գնաց իր հետապնդած նպատակին… իջմիածինը նրա օրով հասաւ նիւթական ու բարոյական քայլքայման ծայրայեղ աստիճանին։

Արտասահմանում, թէ ողջութեան ժամանակ եւ թէ մահւանից յետոյ, Խորէն Ա. Կաթուղիկոսի շուրջ կրքոտ բանալիքներ տեղի ունեցան եւ դեռ ունենում են։ «Հաճատակ», «Հէկիստ», «ամենայն Հայոց կալանաւոր», «Խանջևանի գործակալ», «Դաշնակցութեան համակիր», «Հակադաշնակցական», «ասուրբ», «անսուրբ»… Զո՞ւր եւ անիմաստ աղմուկի Խորէն Կաթուղիկոսը գրանցից եւ ոչ մէկը չէր։ Նա հայ մարդ էր, որ սիրում էր իր հայրենիքն ու ժողովուրդը եւ պատրաստ էր ամէն զոհողութեան նրանց բարիքն ապահովելու համար։ Ցարական իշխանութեան օրով նա աշխատում էր ա'յն ժամանակւայ կառավարութեան միջոցավ օգտագար լինել իր ժողովուրդին։ Հանրապետական տարիներին բարեկամ էր աղքային կառավարութեան։ Երբ եկան բոլչեւիկները՝ փորձեց նրանց գործակցել յօդում միեւնոյն նպատակի։ Ե՞րբ եւ որքա՞ն յաջողեց — այդ ուրիշ խնդիր, բայց վատութեան մէջ նրան կարելի չէ մեղադրել։ Խորէն Ա. Կաթուղիկոսը մաքուր հայրենասէր հայ էր, որ մեռաւ չարաչար մահով իր հայրենասիրութեան համար։ Այդքանը բաւական է, որ աղէսպի յարդանքով գլուխ իշեցնենք նրա դժբախտ, թերեւս եւ անյայտ, դերեղմանի առջեւ…

### ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵԱՆ

Անցեալ Նոյեմբեր 14-ին, մեռաւ բանաստեղծ Յակոբ Յակոբեանը։ Ծնած էր 1866 թ. Գանձակում։ Նախնական կրթութիւնը ստացել էր ծիսական դպրոցում և ողետական դիմնագիոնում, որը սակայն, չէր աւարտել։ 1893-ին անցնում է Բագու, ուր զանազան աշխատանքներ է կատարում։ 1901-ին տեղափոխում է Թիֆլիս Սոեւտրական Դրամատան գլխաւոր հաշւադահի պաշտօնով։ Մինչեւ մահ էլ մը նաց Թիֆլիսում։

Գրական գործունէութիւնը Յակոբեանը սկսեց իննսնական թւականներին՝ առաջին անգամ երեւալով «Մուրճ» ամսագրում 1893-ին։ Հստմեստ տաղանդի տէր ոտանաւոր զրող էր՝ ասզորւած ժամանակի աղքայնական - քաղքենի գաղափարներով։ Իր այդ շրջանի ստեղծագործութեան բնորոշման համար առաջ բերենք Ռաֆֆիի մահւան առթիւ դրած նրա մէկ ոտանաւորը («Մուրճ», 1894 թ., Ապրիլ)։

**ԲԱՖԹԻԻ ՇԻՐՄԻ ՄՈՏ**  
 ( ± 24 Ապրիլի . )

Եւ մուր անապատում երեւցաւ  
 իրեղէն սիւնը, որ առաջնորդում էր  
 ամբոխին դէպի Աւետեաց երկիրը :  
**Հին Կտակարան**

Նա՛, որ մեզ նոր կեանք պատրաստեց,  
 Տւեց զգալ մեր ցաւ ու վէրք,  
 Նա՛, որ մի նոր սերունդ ստեղծեց՝  
 Հալածելով խաւարի հետք .

Նա՛, որ այնքան վառ ու չքեղ  
 Փայլ էր տալիս Հայ կամարին  
 Եւ իրբեւ ջինջ լոյս – համաստնդ  
 Ուղեցոյց էր չեղւողներին .

Նա , որ իրբեւ մի մարգարէ  
 Գուշակում էր Հայ տաղաղան ,  
 Սերմում էր Հայ խողան դաշտում  
 Սուրբ սերմերը դիտակցութեան .

Եւ լցնելով Հայ դպրութեան  
 Մերկ ու տղքատ պահարանը ,  
 Մեղ տանում էր կենդանութեան  
 Նւիրական քաւարանը .—

Այժմ , աւա՛զ , նա մեռած է ,  
 Թէ և անմահ՝ մեր սրտերում ,  
 Եւ հողաբլուր մի ծածկոց է  
 Միայն նրան պատսպարում .

Եւ , կարծես թէ , այս անդամ էլ ,  
 Առանձնացած , այդ վեհ տաղանդ  
 Շիրմի մէջ աղօթում է ,  
 Որ մենք պահենք իւր սուրբ աւանդ :

24 Ապր . , 1894 թ . , Թիֆլիս .

Բայց այս տրամադրութիւնները Յակոբեանի մէջ շատ երկար  
 չմնացին . նաւաթաշաբահի բանւորական միջավայրում՝ նա ընկնում  
 է սոցիալ – գեմոկրատական աղղեցութիւնների տակ եւ սկսում է ո-  
 տանաւորներ գրել Բագրի աշխատաւորական կեանքից : Իր գրելու ձե-  
 ռով նա աւելի Գամառ Քաթիպային է յիշեցնում՝ չունենալով , սա-  
 կայն , վերջինիս տաղանդը . աւելի քարոզիչ – հրապարակագիր է ,

քան արւեստագէտ։ Նա ընկերային - քաղաքական պայքարի երգիչ է : Իր կեանքի վերջին շրջանում ներբողներ էր յօրինում խորհրդային իշխանութեան։ Ինքը՝ Յակոբեանը այսպէս է բնորոշում իր քնարը։ —

Ես երգեցի գործարանի սեւ աշխատանք,  
Եւ ճարճատած պողպատ մէջքերն անիւի տակ,  
Ստեղծագործ հրաշքները կռչո ձեռքերի,  
Յաղթանակող թագը նրանց վեհ պայքարի...

Ինչպէս խորքը, Յակոբեանի ստեղծագործութեան ձեւն էլ պարզ է ու անսեթեւեթ։ Լեզուն ոամկական է, ոճը՝ անպաճոյճ, պատկերները՝ սովորական, ապրումները՝ սահմանափակ ու տարրական։ Հակառակ դրան, Յ. Յակոբեանը մեր դրականութեան մէջ գրաւել է ուրոշ տեղ, իբրեւ բանորական-աշխատաւորական եղանակների երգիչ։

Յակոբեանի ոտանաւորների մէջ ամենէն սիրածն ու ժողովրդականը կարելի է համարել «Մեռա՞ն» չկորան»-ը (գրւած 1906թ.), որ այնպիսի բարձր ներշնչումով արտասանում էր հանդուցեալ դերասան Յ. Զարիֆեանը։ —

Ինչպիսի՛ հերոս ընկերնե՛ր մեռան — մեռան՝  
չկորան...

Կրա՛կն էր ցայտում նրանց աչքունքից, չա՛նթը՝  
շրթունքից,

Երբ խօսում էին ծով - ամրոիդի մէջ վիշտ ու  
կարիքից։

Վրէժի՛, ցաման հրով բորբոքած՝ նրանք  
բեմ ելան,

Եւ բեմը դարձաւ արիւնով ներկւած դոհերի  
սեղան։ —

Ինչպիսի՛ հերոս ընկերներ մեռան ...

Այսօր բանտերում, վաղը աքսորում, միւս օր  
կախաղան

Հանելու համար դահիճը դաժան կացինն  
է սրում,

Բայց հերոսների չուրթերից սեղմւած նզովք  
չի՛ լսւում.

Բաժակ են ըմպում վերածնութեան սիւններին  
կախւած,

Ու հիմնը երգում յեղափոխութեան հպարտ — չյաղթւած —  
Ինչպիսի՛ հերոս ընկերներ մեռան ...

Հէ՛յ, աղատութեան անսկա՛րտ զինւորներ,  
— դո՛ւք, որ անխռով  
Ներկեցիք փողոց ու գործարաններ ձեր տաք արիւնով,  
Նոյն վայրում այսօր ջահիլ - ջիւաններ ըմբոստ չարքերով  
Ձեր դովիքն են անում... ձեր թափւած արեամբ  
սնւում, ամրանում...  
Եւ անմահներիդ երդւում են անւամբ ու հպարտանում,  
Որ գուշ, յիրաւի, պատով, վեհութեամբ  
ձեր գործը տարաք, —  
մեռա՛ք՝ չկորաք:

## Ա.Ի.Ե.ՏԻՍ ՔԱԼԱՆԹԱՐ

Նոյեմբ. 28-ին, Երեւանում, մեռել է յայտնի դիտնական - անաս-նաբոյժ, Համամիութենական Անասնաբուժական Ճեմարանի ուսուց-չապետ Աւետիս Քալանթարեանը: Հանդուցեալը խոչոր մասնադէտ էր եւ փորձւած դիտական ղեկավար, որ 56 տարի աշխատել է իր մաս-նագիտութեան ասպարիզում, չատ կարեւոր պաշտօններ վարել եւ արժէքաւոր գործեր կատարել:

Աւ. Քալանթարը ծնւել էր 1859 թ., Ագուլիսում: Բարձրադոյն կրթութիւնը ստացել էր Մոսկվայի Պետրովսկայ Գիւղատնտեսական Ճեմարանում՝ ընկերակիցելով Սիմ. Զաւարեանին եւ, առհասարակ, Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրներին ու առաջին ըրջանի գործիչներին:

Մինչեւ 1930 թ. Աւ. Քալանթարը գործել է գլխաւորապէս Կով-կասի ու Ռուսաստանի զանազան կողմերը եւ մայրաքաղաքում: Վեր-ջին 7 տարին Հայաստանում էր, դասախոսում էր Անասնաբուժական Ճեմարանում եւ գիւղատնտեսական գործավարութեան խորհրդական էր: 1931-ին նրա ղեկավարութեամբ կազմակերպւեց կաթնատնտե-սութեան գիտա - հետազոտական ճեմարանի Հայաստանի բաժինը, որ հետազային վերածւեց կաթնա - փորձագիտական տարրալուծա-րանի: Կաթնատնտեսութեան եւ անասնապահութեան բնագաւառում բազմաթիւ ուռւսերէն աշխատութիւններ եւ հեռնարկներ է թողել: Նրա խմբագրութեամբ լոյս են տեսել մի շարք գրքեր եւ գիւղատնտե-սական պարբերականներ: Բացի այդ, հրատարակել է 60-ի չափ ժո-ղովրդական գրքոյկ եւ դրել է բազմաթիւ հանրամատչելի յօդւած-ներ զանազան մասնագիտական թերթերում: Արել է նաեւ մի շարք գիւտեր կաթնատնտեսութեան բնագաւառում: Միաժամանակ եւ յար-գւած ու բարեխիղճ հասարակական գործիչ էր: